



Հաստատված է՝

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտա-վերլուծական
կենտրոնի խորհրդի 03.10.2012 թ. № 12-Ա որոշմամբ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ
ԴԻՍՈՒՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ԳՐԱՎՈՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(AMICUS CURIAE)**

№ 12-12-Ա

ք.Երևան

03.10.2012 թ.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտա-վերլուծական կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) խորհուրդը, մասնակցությամբ համակարգող Արա Չոհրաբյանի, քարտուղար Իրինա Փիլոյանի, սահմանադրական արդարադատության հարցերի հանձնաժողովի նախագահ Արտակ Ջեյնալյանի, նորմատիվ իրավական ակտերի փորձաքննության հարցերի հանձնաժողովի նախագահ Գևորգ Գյոզալյանի, մարդու իրավունքների եվրոպական դատարանի գործերի վերլուծության հարցերի հանձնաժողովի նախագահ Վահե Գրիգորյանի, Պալատի ներքին իրավական ակտերի փորձաքննության հարցերի հանձնաժողովի նախագահ Լիլիթ Գրիգորյանի,

քննարկելով ՀՀ սահմանադրական դատարանում քննության ընդունված «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը,

տալիս է սույն գրավոր մեկնաբանությունները հետևյալի մասին.

Հարցի կարևորությունը.

Սույն սահմանադրական գործով մարդու իրավունքների պաշտպանի կողմից (այսուհետ՝ Դիմող) բարձրացվել է ֆինանսական համակարգի հաշտարարի (այսուհետ՝ հաշտարար կամ օմբուդսմեն) ինստիտուտի կայացման և զարգացման համար առանցքային նշանակություն ունեցող խնդիր,

որը վերաբերվում է Հաշտարարի կողմից ընդունվող որոշումների բնույթին և դրանք դատական կարգով բողոքարկելու հնարավորությանը:

Ներկայումս ֆինանսական օմբուդսմենի ինստիտուտի առկայությունը տվյալ երկրում հանդիսանում է ժողովրդավարության, իսկ ընկերություններում՝ կորպորատիվ կառավարման կարևորագույն նախապայման:

Ֆինանսական օմբուդսմենի ինստիտուտի կարևորությունը պայմանավորված է վերջինիս առաքելությամբ, որն արտահայտվում է ֆինանսական շուկայում գործունեություն իրականացնող սպառողների իրավունքների և շահերի պաշտպանությամբ:

Հարկ է նկատել, որ ֆինանսական օմբուդսմենի ինստիտուտը համեմատաբար նոր ինստիտուտ է և այն դեռ իր զարգացման ճանապարհը պետք է անցնի 21-րդ դարում, առավել ևս Հայաստանի Հանրապետությունում, որտեղ այս ինստիտուտի հիմքը դրվեց նախ, 2008 թվականին՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) ընդունմամբ, այնուհետև՝ Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի հիմնադրմամբ:

Նման կառույցի ստեղծման անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետությունում պայմանավորված էր այն հանգամանքով, որ Հայաստանում բացակայում էր ֆինանսական բնագավառում սպառողների բողոքների քննման, սպառող-կազմակերպություն վեճերի լուծման մասնագիտացված արտադատական կառույց, որի ծառայությունները կլինեին անվճար¹ սպառողների համար և որը կապահովեր ներկայացվող պահանջների արագ, արդյունավետ և անկողմնակալ քննություն: Նման կառույցի բացակայության դեպքում սպառողները, ֆինանսական կազմակերպությունների հանդեպ դրամական պահանջ ունենալու դեպքում, կարող էին դիմել միայն դատարան կամ առեվտրային արբիտրաժ: Երկու դեպքում էլ, սակայն, գործընթացը ժամանակատար է, բավականին ծախսատար և ոչ պարզ:

Միջամտությունների (մեկնաբանությունների շրջանակը).

Սույն միջամտության շրջանակում կկատարվի ուսումնասիրություն հետևյալ ուղղություններով՝

- ֆինանսական ոլորտում սպառողների բողոքների քննման և վեճերի լուծման արտադատական մեխանիզմների միջազգային փորձը.
- վիճարկվող նորմի մեկնաբանությունը արդարադատության մատչելիության իրավունքի համատեքստում.

I. Ֆինանսական ոլորտում սպառողների բողոքների քննման և վեճերի լուծման արտադատական մեխանիզմների միջազգային փորձը.

¹ Նշենք, որ որոշ երկրներում (Դանիա, Էստոնիա, Լատվիա, Հոլանդիա, Լեհաստան) ֆինանսական օմբուդսմենի ծառայությունների համար գանձվում է փոքր վճար (10-35 եվրո), որը ետ է վերադարձվում, եթե որոշումը կայացվում է հօգուտ սպառողի:

1. Նախքան Վիճարկվող նորմին անդրադարձ կատարելը, Կենտրոնն անհրաժեշտ է համարում որոշակի վերլուծություն կատարել ֆինանսական ոլորտում սպառողների բողոքների քննման և վեճերի լուծման արտադատական մեխանիզմների միջազգային փորձին, որը հանգում է հետևյալին:
2. Ներկայումս աշխարհի մասնավոր հատվածում առաջ են եկել սպառողների բողոքների քննման և ընկերություն-հաճախորդ վեճերի լուծման տարբեր արտադատական մարմիններ (alternative dispute resolution (ADR)): Որպես վեճերի լուծման այլընտրանքային, արտադատական «համակարգ», այդ կառույցներն ունեն տարբեր անվանումներ, սակայն ժամանակակից երկրների գերակշիռ մասում դրանք ստացել են «օմբուդսմեն» անվանումը, որն ունի շվեդական ծագում և նշանակում է «ժողովրդի ներկայացուցիչ»: Տերմինի շվեդական արմատները պայմանավորված են նրանով, որ այս ինստիտուտն առաջին անգամ ի հայտ է եկել Շվեդիայում 1809 թվականին՝ որպես կառավարության գործունեության վերաբերյալ բնակչությունից բողոքների ընդունող անկախ մարմին:
3. Հետագայում, մոտ մեկ դար հետո՝ 1919 թվականին, նման մարմին ստեղծվեց նաև Ֆինլանդիայում, իսկ ավելի ուշ՝ 1955 թվականին՝ Դանիայում, 1962 թվականին՝ Նոր Զելանդիայում և այլն:
4. Վերջին ժամանակներում օմբուդսմեն հասկացությունն այլ, ավելի նեղ իմաստ է ստացել և իր տարածումն է գտել նաև մասնավոր հատվածում՝ ստանալով այսպես կոչված *ճյուղի օմբուդսմենի* իմաստ: Առաջին երկրներն ԱՄՆ-ն ու Կանադան էին, որտեղ առևտրային կորպորացիաներում ստեղծվեցին օմբուդսմեններ՝ իրենց աշխատակիցներից բողոքներ ընդունելու նպատակով: Այնուհետև նույն կորպորացիաներում ստեղծվեցին նմանատիպ կառույցներ՝ արդեն իրենց սպառողներից բողոքների ընդունման նպատակով:
5. Աստիճանաբար օմբուդսմենի ինստիտուտը առավել լայն տարածում ունեցավ տարբեր ոլորտներում և աշխարհում ի հայտ եկան մեդիա-օմբուդսմեններ՝ թերթերի և հեռուստատեսության նկատմամբ բողոքների համար, դպրոցների և համալսարանների օմբուդսմեններ՝ ուսանողության համար, ինչպես նաև՝ բժշկական օմբուդսմեն՝ բուժ հաստատությունների հիվանդների բողոքների համար:
6. Սակայն հարկ է նշել, որ չնայած օմբուդսմենի «տեսակային բազմազանությանը», ամենալայն տարածում են գտել իրենց ոլորտի վերաբերյալ սպառողներից բողոքներ ստանալու և քննելու նպատակով

մասնագիտացված ասոցիացիաների կողմից ստեղծված օմբուդսմենի կառույցները, քանի որ վերջիններս հանդես են գալիս որպես անկախ մարմին ամբողջ ոլորտի (բանկային, ապահովագրություն) կամ մասնագիտության (իրավաբանություն, բժշկություն) համար:

7. Օմբուդսմենի որպես ինստիտուտի գլխավոր էությունը, նրա անկախությունն է այն կազմակերպություններից կամ մասնագիտություններից, որոնց նկատմամբ ներկայացվում են բողոքները:
8. Ժամանակակից աշխարհում սպառողների բողոքների քննման արտադատական կառույցներ ստեղծվել են առավելապես ֆինանսական ոլորտում: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ այստեղ հիմնականում սպառողների բողոքները ստանում են դրամական արտահայտություն, իսկ կորուստը վերականգնելու դատական ծախսերը բավականին մեծ են սպառողների համար և հաճախ նույնիսկ գերազանցում են բուն կորստի չափը: Այդ պատճառով դրամական գնահատում ունեցող վեճի լուծման արտադատական եղանակներն առավել նախընտրելի են սպառողների շահերի առավել մասնագիտորեն և ճիշտ լուծման համար, ինչպես նաև իրականացվում են սպառողների համար նավագագույն ծախսերով՝ թե՛ ժամանակի և թե՛ ֆինանսական տեսանկյունից:
9. ***Անզուսաքսոնական (ընդհանուր իրավունքի) իրավական համակարգի երկրներում*** Հաշտարարի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերով ֆինանսական օմբուդսմենի որոշումների ըստ էության բողոքարկման ընթացակարգ նախատեսված չէ, իսկ հաճախորդի կողմից օմբուդսմենի որոշման դեմ դատական կարգով բողոք ներկայացվելու դեպքում դատական քննության առարկան են կազմում օմբուդսմենի որոշման օրինականությունը, այլ ոչ թե կազմակերպության գործողության, անգործության կամ որոշման իրավաչափությունը:
10. ***Մեծ Բրիտանիայում*** ֆինանսական օմբուդսմենը հատուկ մասնագիտացված կառույց է, որը որպես միասնական մարմին ծածկում է ֆինանսական բոլոր ոլորտները:
11. Մեծ Բրիտանիայում² «Ֆինանսական ծառայությունների և շուկաների մասին» 2000 թվականի ակտով (Financial Services and Markets Act 2000) կողմերի՝ հաճախորդների և կազմակերպությունների համար ֆինանսական օմբուդսմենի որոշումը դառնում է պարտադիր, եթե այն

² <http://www.financial-ombudsman.org.uk>

ընդունելի է հաճախորդի համար: Հաճախորդը նաև իրավունք ունի չընդունել օմբուդսմենի որոշումը և հայց ներկայացնել դատարան ընդհանուր կարգով:

12. Ընդ որում, բրիտանական օրենսդրությամբ կազմակերպություններն իրավունք ունեն դիմելու դատարան օմբուդսմենի որոշումների վերանայման պահանջով: Սակայն հատկանշական է, որ այդ դեպքում դատարանն ընդամենը ուսումնասիրում է վիճարկվող որոշումը կայացնելու ընթացակարգի օրինականությունը, այլ ոչ թե ինքնին որոշումն ամբողջապես և առանց կոնկրետ գործի հիմքում ընկած բոլոր փաստական հանգամանքների ուսումնասիրության:
13. Այսպիսով, Մեծ Բրիտանիայում ֆինանսական օմբուդսմենի որոշման դատական վերանայումը գործի ըստ էության վերաքննություն, այսինքն՝ օմբուդսմենի որոշման ըստ էության քննությունն չէ և չի ենթադրում վեճի հիմքում ընկած փաստերի ամբողջությամբ վերանայում:
14. Ֆինանսական օմբուդսմենի գործունեությունը կարգավորող օրենսդրությամբ վերջինիս որոշումների դատական վերանայման նման սահմանափակումը պայմանավորված է նրանով, որ Մեծ Բրիտանիայում նախատեսված է ֆինանսական հաշտարարի կողմից որոշման կայացման և/կամ դրա վերանայման բավականին արդյունավետ արտադատական համակարգ: Այստեղ նախատեսված է ֆինանսական օմբուդսմենի կողմից որոշումների կայացման երկու փուլ արտադատական կարգով ֆինանսական վեճեր լուծող այս մասնագիտացված կազմակերպության համակարգի ներսում: Առաջին փուլում որոշումը կայացվում է օմբուդսմենի գրասենյակի հաշտարարի կամ միջնորդի կողմից՝ նախնական քննության արդյունքներով: Եթե վերջինիս որոշումը չի բավարարում այս կամ այն կողմին, ապա այն կարող է բողոքարկվել գլխավոր օմբուդսմենին: Գլխավոր օմբուդսմենն էլ կողմերի ներկայացրած ապացույցների և փաստարկների վերանայման և լրացուցիչ ներկայացված ապացույցների և փաստարկների ուսումնասիրության հիման վրա կայացնում է որոշում, որը վերջնական է և հաճախորդի կողմից ընդունելի լինելու դեպքում դառնում է պարտադիր կազմակերպության համար:
15. Ահա այս որոշումը կազմակերպության կողմից կարող է դատական կարգով բողոքարկվել միայն իրավունքի, այն էլ միայն ընթացակարգային նորմերի հիմքով՝ «Ֆինանսական ծառայությունների և շուկաների մասին» ակտի հիման վրա: Ընդ որում,

պարզ անհամաձայնությունը ֆինանսական օմբուդսմենի որոշման հետ բավարար հիմք չէ դրա դատական կարգով վիճարկման համար: Բողոքարկող կազմակերպությունը կամ հաճախորդը պարտավոր է հիմնավորել և պատճառաբանել նման բողոքարկման անհրաժեշտությունը և օմբուդսմենի որոշման անարդարացիությունը:

16. Մեծ Բրիտանիայի դատական պրակտիկայում ընդունված է, որ օմբուդսմենի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալիս, դատարանն այսպես թե այնպես անդրադառնում է վերջինիս որոշման օրինականությանը: Դա է այն հիմնական պատճառներից մեկը, որ ֆինանսական օմբուդսմենի որոշման դատական վերանայման լայն հնարավորությունների նախատեսումը Մեծ Բրիտանիայում համարվում է աննպատակահարմար:
17. Այսպիսով, ֆինանսական օմբուդսմենի համակարգի ներսում որոշման կայացման և դրա վերանայման, մասնավորապես, դրա երկփուլային կառուցվածքը և օմբուդսմենի կայացրած որոշման հարկադիր կարգով կատարման ներկայացնելու հնարավորությունը Մեծ Բրիտանիայում առավել արդյունավետ է դարձնում քննարկվող ինստիտուտի գործունեությունը և նվազեցնում է ֆինանսական օմբուդսմենի որոշումների դատական կարգով բողոքարկման և վերանայման անհրաժեշտությունը:
18. Ընդ որում, Մեծ Բրիտանիայում ֆինանսական համակարգի գործունեությունը կանոնակարգող օրենսդրությամբ կազմակերպության կողմից դատարանում բողոք ներկայացվելու դեպքում դատական բողոքարկման առարկան են կազմում օմբուդսմենի որոշման օրինականությունը, իսկ գործի դատական քննությունն իրականացվում է ոչ թե ըստ էության, այլ միայն ընթացակարգային իրավունքի մասով:
19. Նույն կարգավորումն են նախատեսում նաև անգլոսաքսոնական իրավական համակարգի մեջ մտնող այլ երկրներում՝ Նոր Զելանդիայում, Ավստրալիայում և Կանադայում:
20. *Մայրցամաքային-ռոմանագերմանական իրավական համակարգի երկրներում* օմբուդսմենի որոշումների դատական վերանայման ընթացակարգը տարբերվում է անգլոսաքսոնական իրավական համակարգ ունեցող երկրներում սահմանված ընթացակարգերից՝ այդ թվում դատական բողոքարկման մասով:

21. Մասնավորապես, *Շվեյցարիայում* բանկային օմբուդսմենը, որը հիմնադրվել է Շվեյցարական բանկերի (բանկիրների) ասոցիացիայի (Swiss Bankers Association) կողմից, խիստ խորհրդատվական-միջնորդական կազմակերպություն է. այստեղ բանկային օմբուդսմենի գործունեությունը կրում է խիստ խորհրդատվական, երաշխավորական և հաշտարարական բնույթ:
22. Շվեյցարիայում օմբուդսմենի առաքելությունը վեճի կողմերին հաշտեցնելն է՝ դատական քաջքշուկներից և դժվարություններից խուսափելու և գումարներ խնայելու համար: Այնուամենայնիվ, եթե վեճի կողմերից մեկին բանկային օմբուդսմենի որոշումը չի բավարարում, վերջինս լիովին ազատ է դիմելու դատարան կամ իրավունքների պաշտպանության այլ իրավական ընթացակարգերի: Ընդ որում, այդ դեպքում դատական քննությունն իրականացվում է ըստ էության, ամբողջ ծավալով, թե իրավունքի, և թե փաստի հիմքով:
23. Օմբուդսմենի շվեյցարական հաշտարարական-խորհրդատվական բնույթով է պայմանավորված նաև այն հանգամանքը, որ Շվեյցարական օրենսդրությամբ նախատեսված չէ դատարանի կողմից տրված կատարողական թերթի հիման վրա օմբուդսմենի որոշման հարկադիր կատարման հնարավորություն, քանի որ համաձայն օմբուդսմենի շվեյցարական մոդելի, վերջինիս՝ որպես ֆինանսական վեճեր լուծող կազմակերպության կողմից կայացված խորհրդատվական-հաշտարարական որոշումը չի կարող դատական կարգով հարկադիր կատարման ենթակա ակտ հանդիսանալ:
24. *Գերմանիայում* նույնպես ֆինանսական օմբուդսմենը հանդես է գալիս որպես ֆինանսական բոլոր ոլորտները ծածկող հատուկ մասնագիտացված կառույց է, որը հիմնադրվել է Գերմանական Բանկերի Ասոցիացիայի կողմից (The Association of German Banks - Bundesverband Deutscher Banken) և գործում է 2009 թվականի «Գերմանական բանկային սեկտորում հաճախորդների բողոքների լուծման ընթացակարգի կանոնների» հիման վրա, որոնք այլ կերպ կոչվում են նաև «Օմբուդսմենի համակարգի ընթացակարգային կանոններ»՝ հաստատված Գերմանիայի Արդարադատության դաշնային նախարարության կողմից («Rules of procedure for the settlement of customer complaints in the German banking sector» approved by the Federal Ministry of Justice: Rules of Procedure of the Ombudsman Scheme):
25. Գերմանիայի բանկային օմբուդսմենի կառուցվածքում գործում է հաճախորդների բողոքների գրասենյակ (Customer Compliants Office),

որը միջանկյալ օղակ է բանկերի հաճախորդների և օմբուդսմենի համակարգի միջև: Հաճախորդները, նախ իրենց բողոքներն ուղարկում են գրասենյակ, որտեղից էլ բողոքի նախնական ուսումնասիրությունից հետո այն ուղարկվում է օմբուդսմենին:

26. Եթե վեճի առարկա գումարի արժեքը չի գերազանցում այն գումարը, որը սահմանված է Գերմանական արդարադատության ակտով (Gerichtsverfassungsgesetz - German Judicature Act, 2000) առաջին ատյանի տարածքային դատարանում ֆինանսական վեճերի լուծման համար³, Բանկային օմբուդսմենի որոշումը պարտադիր է դառնում միայն կազմակերպության համար, բայց ոչ հաճախորդի: Կազմակերպությունն իրավունք չունի այս դեպքում դիմելու դատարան իր իրավունքների պաշտպանության համար, ի տարբերություն հաճախորդի, որն այդ հարցում ազատ է՝ անկախ վիճարկվող գումարի չափից: Ընդ որում, հաճախորդն իրավունք ունի պահանջել օմբուդսմենից իրեն ներկայացնել գրավոր հաստատում այն մասին, որ իրեն չի հաջողվել արտադատական կարգով լուծել վեճը, և այս պահանջը պարտադիր է օմբուդսմենի համար: Այս դեպքում, փաստորեն, դատական բողոքարկման և քննության առարկան է կազմում ոչ թե օմբուդսմենի որոշման օրինականությունը, այլ կազմակերպության գործունեության իրավաչափությունը:
27. Կազմակերպությունն իրավունք ունի դիմել դատարան իր իրավունքների պաշտպանության համար, եթե օմբուդսմենի կողմից քննվող վեճի առարկան կազմող գումարի արժեքը գերազանցում է հինգ հազար եվրոն: Այլ կերպ ասած՝ հինգ հազար եվրոն գերազանցող գումարի վերաբերյալ բողոքի հիման վրա օմբուդսմենի կայացրած որոշումը պարտադիր չէ ոչ միայն հաճախորդի, այլ նաև կազմակերպության համար, և նրանք իրավունք ունեն դիմելու դատարան ընդհանուր հիմունքներով:
28. **Ֆրանսիայում** ֆինանսական օմբուդսմենը հատուկ մասնագիտացված կառույց է, որը որպես միասնական մարմին ծածկում է ֆինանսական բոլոր ոլորտները: Այստեղ բանկային/ֆինանսական միջնորդական գործունեության իրավական հիմքը 2001 թվականի դեկտեմբերի 11-ի «Ֆինանսների և տնտեսության բնագավառում անհետաձգելի բարեփոխումների մասին» օրենքն է (Mesures urgentes de réformes à caractère économique et financier - MURCEF Law): Նշված օրենքի հիման վրա Ֆրանսիայում առանձին բանկեր ունեն իրենց միջնորդ-հաշտարարը, որը լուծում է տվյալ բանկի և դրա հաճախորդների միջև ծագած վեճերը:

³ ներկայումս այդ գումարը հինգ հազար եվրոն է:

29. Միաժամանակ, Ֆրանսիայում Ֆինանսական շուկաները կարգավորող մարմնի (Autorité de Marchés Financiers - AMF), Ֆինանսական կազմակերպությունների ասոցիացիայի (Association des Sociétés Financières - ASF) և Ֆրանսիական բանկերի ֆեդերացիայի (Fédération Bancaire Française - FBF) կառուցվածքում գործում են միջնորդական ծառայություններ, որոնց հիմնական գործառույթներից մեկն էլ հանդիսանում է մասնավոր անձանց և կազմակերպությունների միջև ծագած վեճերի արտադատական կարգավորումը միջնորդության կարգով:
30. Վերը նշված կազմակերպությունները միջնորդական ծառայություններ են մատուցում այն բանկերին, որոնք չունեն այդպիսի ծառայություններ բանկի ներսում, ինչպես նաև այն դեպքում երբ բանկը մերժում է հաճախորդին նշանակել միջնորդ-հաշտարար՝ միջնորդության կարգով վեճը լուծելու համար:
31. Բանկային օմբուդսմենի գործունեության հաշտարարական բնույթից ելնելով՝ ոչ մի իրավական միջոց չի կարող կիրառվել Ֆրանսիայում օմբուդսմենի որոշման կատարումն ապահովելու համար: Եվ այն դեպքում, երբ բանկային օմբուդսմենի միջամտությունը նույնպես չի հանգեցնում կողմերի հաշտվելուն, վերջիններս ազատ են դիմելու դատական ընթացակարգերի:

II. **Վիճարկվող նորմի մեկնաբանությունն արդարադատության մատչելիության իրավունքի համատեքստում.**

32. Վիճարկվող նորմն անհարժեշտ է նախևառաջ դիտարկել ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համատեքստում և պատասխանել այն հարցադրմանը, թե ***արդյո՞ք վիճարկվող նորմով նախատեսված իրավական կարգավորումը սահմանափակում է անձի արդատադատության մատչելիության իրավունքը:***
33. Կենտրոնը բազմաթիվ անգամ անդրադարձ է կատարել ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով, ինչպես նաև՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ, և 13-րդ հոդվածներով երաշխավորված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների և արդարադատության մատչելիության

իրավունքների էությանը⁴:

34. Օրենքի 17-րդ հոդվածը սահմանում է՝
«1.Իրավասու դատարանը չեղյալ է ճանաչում Ֆինանսական համակարգի հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշումը, եթե՝
1) պահանջը ենթակա չէ քննության Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից.
2) Ֆինանսական համակարգի հաշտարարը որոշում է կայացրել սույն օրենքով սահմանված ընթացակարգային կանոնների պահանջների խախտմամբ.
3) բացահայտվել են Ֆինանսական համակարգի հաշտարարի անաչառությունը բացառող հանգամանքներ»:
35. Հոդվածի 1-ին մասը վերաբերում է այն դեպքերին, երբ ներկայացված պահանջը ենթակա չէ քննության հաշտարարի կողմից: Օրենքի 3-րդ հոդվածի իմաստով հաշտարարի կողմից քննության ենթակա են այն պահանջները, որոնք 1) *ներկայացվում են հաճախորդի կողմից Կազմակերպության դեմ, 2) կապված են Կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների հետ և 3) պարունակում են տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջ:*
 Նշված երեք պայմաններին չհամապատասխանող պահանջները ենթակա չեն քննության հաշտարարի կողմից: Այս իրավանորմի մասով Կենտրոնը խնդիր չի տեսնում:
36. Կենտրոնի համոզմամբ Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ձևակերպումը վտանգավոր նախադեպերի հիմք կարող է ծառայել:
37. Խնդիրը կայանում է նրանում, որ այդ նորմի իմպերատիվ շարադրանքի համաձայն Օրենքով սահմանված ընթացակարգային որևէ կանոնի խախտում (այդ թվում՝ ոչ էական) թույլ տալու դեպքում, հաշտարարի որոշումը կարող է չեղյալ ճանաչվել:
38. Զուգահեռ անցկացնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հետ, հարկ է նկատել, որ դատավարական իրավունքի նորմերի ոչ բոլոր խախտումներն են հանգեցնում դատական ակտի բեկանմանը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն՝ *դատավարական իրավունքի նորմերի*

⁴ Տես՝ 02.02.2011 թվականի թիվ 03-11-Ս, 21.03.2011 թվականի թիվ 10-11-Ս, 09.12.2011 թվականի թիվ 30-11-Ս եզրակացությունները, ինչպես նաև 04.07.2012 թվականի թիվ 07-12-Ս, 13.07.2012 թվականի թիվ 08-12-Ս գրավոր մեկնաբանությունները (amicus curiae):

խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման:

Նշված նորմը որպես վճռի բեկանման հիմք է դիտում միայն այն դատավարական իրավունքի խախտումը կամ սխալ կիրառումը, որը **հանգեցրել է գործի սխալ լուծման:** Նույն հոդվածի 2-րդ մասը որպես նման «կոպիտ» դատավարական իրավունքի խախտում է դիտում այն դեպքերը, երբ դատարանը գործը քննել է ոչ օրինական կազմով, կամ գործին մասնակցող անձանցից որևէ մեկի բացակայությամբ, որը պատշաճ ձևով չի տեղեկացվել նիստի ժամանակի և վայրի մասին, վճիռը ստորագրել է ոչ այն դատավորը, որը կայացրել է այն, վճիռը կայացրել է ոչ այն դատավորը, որը մտնում է գործը քննող դատարանի կազմի մեջ, գործից բացակայում է դատական նիստի արձանագրությունը:

39. Այս տեսանկյունից, ստացվում է այնպես, որ գործող իրավակարգավորման պարագայում հաշտարարի որոշումը կարող է դատական կարգով չեղյալ ճանաչվել ցանկացած ընթացակարգային, այդ թվում՝ ձևական խախտումների հիմքով:
40. Հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու համար հիմք հանդիսացող հաջորդ պայմանը հաշտարարի անաչառությունը բացառող հանգամանքների բացահայտումն է (17-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ):
41. Օրենքի համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանում բացակայում են հաշտարարի անաչառությունը բացառող հանգամանքների սահմանումը: Այս կապակցությամբ, անհրաժեշտ է անդրադառնալ Օրենքի 25-րդ հոդվածին, համաձայն որի՝ խորհրդի լիազորությունների մեջ է մտնում նաև Գրասենյակի գործունեությունը կարգավորող ներքին իրավական ակտերի հաստատումը, այդ թվում՝ ակտերի, որոնցով սահմանվում են Խորհրդի անդամների, *Ֆինանսական համակարգի հաշտարարի և Գրասենյակի աշխատակիցների վարքագծի և էթիկայի կանոնները, որոնք ներառում են նաև բացարկի ու ինքնաբացարկի ներկայացման, քննարկման և որոշման կայացման դեպքերն ու կարգը...:*
42. Նախ, հայտնի է, որ բացարկի և ինքնաբացարկի ինստիտուտի հիմքում առաջին հերթին ընկած է գործով որոշում կայացնողի անկողմնակալությունը և գործի էլքով վերջինիս չճանաչողականությունը, այն է՝ նրա անաչառությունը բացառող հանգամանքները, որոնք էլ ենթակա են քննարկման և լուծման օրենքով սահմանված կարգով:

43. ՀՀ դատական օրենսգրքի (հոդված 91), քաղաքացիական դատավարության (21 հոդված) և վարչական դատավարության (հոդված 10) օրենսգրքերի վերլուծությունից հետևում է, որ ինքնաբացարկի պարտականության (բացարկի միջնորդության) հիմքում ընկած է դատավորի կողմից այնպիսի փաստերի կամ հանգամանքների իմացությունը (տեղեկացվածությունը), որոնք կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անկողմնակալության կապակցությամբ: Նշված օրենսդրական ակտերը հնարավորինս մանրամասն ամրագրում են ինքնաբացարկի (բացարկի) հիմքերը (դեպքերը), դրանց քննարկման և լուծման կարգը:
44. Հարկ է նշել նաև, որ բացարկի և ինքնաբացարկի ինստիտուտներն անձի իրավունքների իրականացման և պաշտպանության լրացուցիչ երաշխիք և պայման են, որոնց հիմքում ընկած է առաջին հերթին արդար դատաքննության իրավունքը:
45. Հարց է առաջանում՝ *սահմանադրական է արդյո՞ք Օրենքով Խորհրդին լիազորելը վարքագծի և էթիկայի կանոններով, ի թիվս այլ իրավասությունների, հաստատելու նաև ֆինանսական համակարգի հաշտարարի բացարկի ու ինքնաբացարկի ներկայացման, քննարկման և որոշման կայացման դեպքերն ու կարգը:*
46. Այս առումով անհրաժեշտ է անդրադառնալ ՀՀ Սահմանադրության 83.5 հոդվածի 1-ին կետին, համաձայն որի՝ «Բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը...» («Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 9, 4-րդ մասի 1-ին կետ):
47. Սահմանադրական նշված դրույթն ըստ էության բխում է *օրենքի վերապահման սկզբունքից*, որի համաձայն՝ հասարակական հարաբերությունների որոշակի խմբեր չեն կարող այլ իրավական ակտերով կարգավորվել, քան օրենքով: Այսինքն՝ ըստ օրենքի վերապահման սահմանադրական սկզբունքի՝ հասարակական հարաբերությունների որոշակի խմբերի իրավական կարգավորումը կարող է *վերապահվել* միայն օրենքին՝ ազգային ժողովի կողմից ընդունվող ձևական իրավական ակտին:
48. Օրենքի վերապահման սկզբունքից ելնելով՝ հատկանշական է, որ Օրենքի 17-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետում ամրագրված դրույթը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 83.5

հողվածի 1-ին կետին, քանի որ Օրենքի նշված դրույթը բացարկի և ինքնաբացարկի հետ կապված հարաբերությունների կարգավորումը թողել է Խորհրդի կողմից հաստատվող վարքագծի և էթիկայի կանոններին, այնինչ՝ *բացարկի/ինքնաբացարկի ինստիտուտը, որպես քաղաքացիների և կազմակերպությունների իրավունքների իրականացման և պաշտպանության երաշխիք, ինչպես նաև դրա իրականացման կարգը և պայմանները*՝ ըստ ՀՀ Սահմանադրության 83.5 հոդվածի 1-ին կետի, պետք է կարգավորվեն բացառապես օրենքով՝ Ազգային ժողովի կողմից ընդունվող ձևական իրավական ակտով:

49. Այսպիսով, Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում ամրագրված դրույթի սահմանադրականության հարցը վիճելի է ՀՀ Սահմանադրության 83.5 հոդվածի 1-ին կետին համապատասխանության տեսանկյունից: Այս առումով, առավել արդարացի կլիներ՝ որպես հաշտարարի անկախության երաշխիք, Օրենքով՝ այսինքն՝ օրենսդիր մարմնի կողմից ընդունվող ձևական ակտով հստակ ամրագրել բացարկի և ինքնաբացարկի հիմքերը, դեպքերը և լուծման կարգը:
50. Նույն համատեքստում, ֆինանսական համակարգի հաշտարարի անաչառության երաշխավորման տեսանկյունից՝ լիովին արդարացի է Օրենքի 19-րդ հոդվածով հաշտարարի անկախության սահմանումը, ինչպես նաև Օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով ֆինանսական օմբուդսմենի անկախությունը երաշխավորող մեկ այլ նորմի ամրագրումը, համաձայն որի՝ *«Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, լինել որևէ կուսակցության ղեկավար մարմնի անդամ, զբաղեցնել պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, առևտրային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից, և պետք է զերծ մնա իր անկախությունը և անաչառությունը կասկածի տակ դնող գործողություններից»:*
51. Այս առումով պետք է նշել, որ այն բոլոր երկրներում, թե անգլոսաքսոնական, թե ռոմանագերմանական իրավական համակարգերի, որտեղ առկա է ֆինանսական համակարգի հաշտարարի ինստիտուտը, ֆինանսական/բանկային օմբուդսմենի գործունեության առաջնային սկզբունքը վերջինիս անկախությունն ու անկողմնակալությունն է: Ընդ որում, այդ երկրներում սահմանված են բավականին լուրջ երաշխիքներ ֆինանսական օմբուդսմենի

անկախությունն ու անկողմնակալությունը ապահովելու և երաշխավորելու համար:

52. Սույն գրավոր մեկնաբանությունների շրջանակում Կենտրոնն անհրաժեշտ է համարում ֆինանսական համակարգի հաշտարարի ինստիտուտը համեմատել առևտրային արբիտրաժի հետ, որը նույնպես հանդիսանում է սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության ինքնուրույն արտադատական ձև:
53. Հայաստանի Հանրապետությունում առևտրային արբիտրաժի ձևովորման և նրա գործունեության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքով, որն ընդունվել է 2006 թվականի դեկտեմբերի 25-ին:
54. «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է առևտրային արբիտրաժի գործունեության երկու հիմնական սկզբունք՝
ա) արբիտրաժի իրականացման նպատակն է առանց անհարկի ձգձգումների կամ ծախսերի ստանալ անկողմնակալ արբիտրաժային տրիբունալի կողմից վեճերի արդարացի լուծում.
բ) կողմերն ազատ են իրենց միջև վեճերի լուծման ընթացակարգի շուրջ համաձայնվելու հարցում, որը ենթակա է միայն օրենքով նախատեսված սահմանափակումների:
55. Հատկանշական է այն հանգամանքը, որ արբիտրաժային տրիբունալի կողմից կայացված որոշումն էլ ըստ էության բողոքարկման ենթակա չէ, և հարց է ծագում ***արդյո՞ք այդ իրավակարգավորումը չի հակասում ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքին:*** Եթե, արբիտրաժի արդյունքում ընդունված որոշումը կարող է բողոքարկման ենթակա չլինել ու դա չի հակասի ՀՀ Սահմանադրությանը, ապա նույն տրամաբանությամբ ֆինանսական օմբուդսմենի որոշումը նույնպես կարող է բողոքարկման ենթակա չլինել:
56. Այս համեմատության համար էական է նաև այդ երկու ինստիտուտների որոշ առանձնահատկությունները հաշվի առնել: Այսպես՝
- առևտրային արբիտրաժը (արբիտրը) ձևավորվում է կողմերի միջև կնքված համաձայնության հիման վրա, ի տարբերություն ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի, որը հիմնադրվում է կենտրոնական բանկի կողմից, իսկ հաշտարարը նշանակվում է Խորհրդի կողմից:
 - ընդհանուր կանոնի համաձայն՝ կողմերն ազատ են արբիտրի

ընտրության և նրան ներկայացվող ցանկացած պահանջ սահմանելու հարցում: Մինչդեռ՝ Ֆինանսական օմբուդսմենի պարագայում անձն ընտրության հնարավորություն չունի, իսկ օմբուդսմենին ներկայացվող պահանջները սահմանվում են Օրենքով: Մասնավորապես՝ հաշտարարը պետք է ունենա բարձրագույն կրթություն, բարձր հեղինակություն և առնվազն հինգ տարվա աշխատանքային փորձ, վերջին երեք տարիների ընթացքում չպետք է աշխատած լինի որևէ Կազմակերպությունում, չպետք է զբաղվի ձեռնարկատիրական գործունեությամբ, լինի որևէ կուսակցության ղեկավար մարմնի անդամ, զբաղեցնի պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, առևտրային կազմակերպություններում, կատարի այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից, և պետք է զերծ մնա իր անկախությունը և անաչառությունը կասկածի տակ դնող գործողություններից:

- առևտրային արբիտրաժի պարագայում օրենքը նախատեսում է արբիտրին բացարկ հայտնելու և նրա փոխարինելու հնարավորություն: Ֆինանսական օմբուդսմենի պարագայում օրենքը նման կարգավորում չի նախատեսում (այդ հարցի կարգավորումը տրված է Խորհրդին):
- արբիտրաժային տրիբունալը կայացնում է վճիռ, որը ենթակա է պարտադիր ճանաչման և կատարման (որոշ բացառություններով): Ֆինանսական օմբուդսմենը պահանջի քննության արդյունքներով կայացնում է որոշում, որը կողմերի համար դառնում է պարտադիր, եթե այն առաքելու պահից 30 աշխատանքային օրվա ընթացքում հաճախորդն անվերապահորեն և գրավոր ձևով համաձայնվում է որոշման հետ: Երեսուն աշխատանքային օրը լրանալուց հետո Ֆինանսական համակարգի հաշտարարը պարտավոր է Կազմակերպությանը ծանուցել հաճախորդի գրավոր համաձայնության առկայության կամ բացակայության մասին և համապատասխանաբար՝ որոշումը կողմերի համար պարտադիր դառնալու կամ այդպիսին չդառնալու մասին:

Եզրակացությունը.

Իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցների շարքում առանձնակի կարևորությամբ է օժտված արդարադատության մատչելիության (դատական պաշտպանության) իրավունքը, քանի որ այն իրականացվում է իշխանությունների տարանջատման համակարգում ինքնուրույն և անկախ կարգավիճակ ունեցող մարմնի՝ դատարանի կողմից՝ օրենսդրությամբ հստակ սահմանված ընթացակարգով:

Այս իրավունքը բնութագրվում է որպես անձի՝ հիմնական անօտարելի

իրավունքներից մեկը և միաժամանակ՝ որպես այլ իրավունքների իրականացման և պաշտպանության երաշխիք:

Որպես սպառողների իրավունքների պաշտպանության յուրօրինակ մեխանիզմ է հանդես գալիս նաև ֆինանսական օմբուդսմենի ինստիտուտը, որը որպես անկախ և մասնագիտացված մարմին Օրենքով սահմանված ընթացակարգով քննում և լուծում է սպառողի և կազմակերպության միջև առաջացած և դրամական արտահայտություն ունեցող վեճերը:

Կենտրոնի համոզմամբ վիճարկվող նորմը խնդրահարույց կարգավորում է նախատեսում՝ կապված արդարադատության մատչելիության իրավունքի արդյունավետ ապահովման հետ, քանի որ սպառողի համար չի ստեղծում իր իրավունքների իրականացմանը միջամտող իրավական ակտը վիճարկելու հստակ և իրական հնարավորություն:

Համակարգող՝

Արա Զոհրաբյան

քարտուղար՝

Իրինա Փիլոյան